Պարույր Սևակ

Օրվա երգը

Մենք հասկանալով՝ հաճախ չենք զգում
Մեր ապրած օրվա իմաստը խորին.
Հաճախ մեզ օրը թվում է անգույն,
Թվում է՝ ոչինչ չփոխեց կյանքում
Ու չպարգևեց ոչինչ աշխարհին:
Նա ի՞նչ է արել. այգի է ջրել,
Առու է հանել, քաշել է ածու:
Սա՛ ի՞նչ է արել. լոկ սերմ է ցրել:
Ե՛ս ի՞նչ եմ արել. մի երգ եմ գրել,
Մի երգ եմ գրել, ոչ ժողովածու:
Ամեն օրվա պես պաստառ է գործել
Ամեն օրվա պես աղջիկն այս ժպտուն:
Ամեն օրվա պես դրել է փորձեր,
Ո՛չ գյուտ է արել, ո՛չ հրաշք գործել
Այս գիտնականը իր փորձադաշտում:
Ամեն օրվա պես քաջ վիետնամցին
Կռիվ է մղել դիրքերից խոնավ:
Իր ատամներից, բռունցքից բացի
Այլ բան չի սեղմել դեռ եգիպտացին՝
Տեսնելով զինված թշնամու նոր նավ...
Մենք հասկանալով՝ հաճախ չենք զգում

Մեր ապրած օրվա իմաստը խորին.
Հաճախ մեզ օրը թվում է անգույն,
Թվում է՝ ոչինչ չփոխեց կյանքում
Եվ չպարգևեց ոչինչ աշխարհին:
Բայց օրը ունի իր լիցքը ներքին,
Իր լիցքը անտես՝ ատոմի նման:
Ձայնակցում են ի՛մ, քո՛ գրած երգին
Ամբո՞ղջ մի աշխարհ, ամբո՞ղջ մի երկիր,
Եվ - նա հնչում է աշխարհում համայն:
Ջահել աղջկա պաստառը գործած
Առագաստ դարձած՝ նավեր է վարում,
Նավե՛ր, որ հացի հակերը բարձած,
Խեղճ հնդիկներին սոված ու քաղցած
Հացի հետ նաև հավա՞տ են տանում:
Ոռոգված այգին իր բերքն է տալիս.
Եվ բերքից բացի՝ նույն այգում դրած
Համեստ փորձերով, դեռ չանցած տարին
Ցուրտ հյուսիսն անգամ նույն բերքն է տալիս
Աշխարհի ապշած աչքերի առաջ:
Մենք հասկանալով՝ հաճախ չենք զգում
Մեր ապրած օրվա իմաստը խորին,
Հաճախ մեզ օրը թվում է անգույն,
Թվում է՝ ոչինչ չփոխեց կյանքում
Եվ չպարգևեց ոչինչ աշխարհին:
Բայց չմոռանա՛նք, հիշե՞նք հավիտյան,
Որ օրերով է դարն ամենազոր,
Եվ որ ամեն օր մեր կամքով հզոր
Ատամնանիվը համառ պատմության
Առաջ է գնում և՛ս մի խազով:

20.II.1952թ.
Մոսկվա